

նշանակութիւնն ըստի, ունեն նաև պաշտամունքային բնույթ և կազմում են արևի, երկնքի պաշտամունքի հետ:

7. Հայաստանի խոհանոցային մետաղե սպասքի բաղկացուցիչ մասն են կազմում կեռիկները, որոնք բաժանվում են չորս տիպի: I տիպին են վերաբերում սուր ծայրը կիսակլոր կեռած, խողովակաձև կոթառով օրինակները /Կիրովական, Լոռի-բերդ, Լճաշեն, Քակիա/: II տիպն են կազմում Լճաշենից գտնված, 63-65 սմ երկ. ունեցող, հակադիր ծայրերը կիսակլոր կեռած ձողերը: Սուր ծայրը մի փոքր կիսակլոր թեքած ընդհանր, երկար ձողերը կազմում են կեռիկների III տիպը /Տուրոս, Ղարաբաղ/: Ի տարբերութիւն վերը նշվածների, սրանց վրա պահանջվել են լայն բրոնզե օղեր՝ փայտե բռնակներն ամրացնելու համար: IV տիպը ներկայացված է Արթիկի վերոհիշյալ շերեփով, որի երկար /51 սմ/ բռնակն ավարտվում է երկու զուգահեռ, խիստ ծոված, սրածայր կեռերով: Ընդունված կարծիք կա, որ այս կեռիկներն օգտագործվել են կաթսաներից միս և եփած այլ մթերքներ հանելու համար: Միաժամանակ Լճաշենի և Արթիկի երկար կեռերը հնարավորութիւն են տալիս ենթադրելու, որ սրանք օգտագործվել են նաև իբրև կրակխոռոչների, վառարաններից /թոնիկներից/, օջախներից պատրաստի ուտեստներ հանելու համար:

8. Վերը թվարկված մետաղե սպասքի բաղկացուցիչ տարրերը կազմող բարձրարվեստ և նրբամաշակ նյութերն աներկբա հաստատում են դրանց՝ տոհմ-ցեղային ավագանուն պատկանելը, մեկ անգամ ևս վկայելով խորը սոցիալական անհավասարութեան առկայութիւնը: Հայաստանի նշված ժամանակաշրջանի հասարակութեան մեջ: Կիրովականից գտնված ոսկե զգվաթը, արծաթե թասը և բրոնզե շերտիկները կապված են եղել նաև արևի, երկնքի, պտղաբերութեան պաշտամունքի հետ և կարող էին օգտագործվել այդ պաշտամունքների հետ կապված տարբեր ծիսական արարողութիւնների ժամանակ: Նշված առարկաների ձևերի նմանութիւնը առաջավորասիական նյութերին, վկայում է տեղական մշակութիւնի սերտ կապը Անդրկովկասի և Առաջավոր Ասիայի մշակութիւնների հետ, հանդիսանալով նրանց բաղկացուցիչ մասը:

Բ.Գ.ԵՐԻՅՅԱՆ

ՀԱԻ

ԸՄՐԻ ԴԱՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒ ԹՎԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ

1. Հայաստանի քարի դարի հուշարձանների գերակշռող մասը

պատկանում է բացօթյա կայանների շարքին: Նրանցից ստացված մշակույթը գուրկ է բնական գործոններից և գուտ հնազիտական է, հետևաբար թվագրման ոչ մի այլ եղանակ, բացի բուն իրերի ուսումնասիրությունը, այստեղ պիտանի չէ:

2. Երևանի և Լուսակետտի քարայր-կացարանների ուսումնասիրության փորձը և ցնական գիտությունների օգնությամբ ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված քարայրների մշակույթը հնարավոր չէ թվագրել ոչ միայն երկրաբանական շերտագրության, այլև բացարձակ թվագրության օգնությամբ: Թվագրման նշված եղանակները պարզապես օժանդակ միջոց են բուն հնազիտականի համար և չեն կարող դիտվել որպես նրա համարժեքը կամ փոխարինողը:

3. Բնական մեթոդների լայն տարածումն ու կիրառումը ժամանակակից հնագիտության մեջ մոդայիկ բնույթ է կրում և չի կարելի կարծել, թե դրանցով է որոշվում գիտության արդի մակարդակը: Այն ծագել է ավանդույթային տիպաբանական մեթոդի արատներից, որոնցից գլխավորը կարելի է համարել մշակույթի զարգացման աստիճանը չպարզելը և որպես թվագրվող գործոն չլինելը:

Այսպիսով, օգտագործվող տիպաբանական մեթոդն անկարող է թվագրել մշակույթը, որի պատճառով էլ հնագետը ստիպված է բնական բովանդակագուրկ նյութի բացարձակ տարիքը մեխանիկորեն վերագրել մշակույթին և դրանով իսկ բռնել ոչ պատմական մոտեցման ուղին:

4. Մշակույթի թվագրման գործում բազմաթիվ անժշտություններ և թյուրիմացություններ են ծագում նաև մշակույթի ոչ կոնկրետ, չտեղայնացված ուսումնասիրությունից: Իրերը, համալիրները և մշակույթները փոխանակ համեմատվին ու հայտնաբերվին իրար հետ, կտրվում են միջավայրից և համեմատվում այլ տեղերից ավելի հայտնի ու թվագրված գուգահեռների հետ: Այս ոչ գիտական պրակտիկան ունի խոր արմատներ և զալիս է եզակի, գեղեցիկ իրերը արվեստաբանորեն բացատրելուց, որը և անխուսափելիորեն հանգեցնում է ոչ միայն մշակույթի միասնության աղճատմանը, այլև նրա ոչ միշտ թվագրմանը: Իման դեպքում է, որ հնագետն քնդուսնում է միգրացիաների, ներմուծումների և հեռավոր գուգահեռների արատավոր տեսությունները:

6. Մշակույթի թվագրման գլխավոր գործոնն արտադրության գործիքների ուսումնասիրությունն է, առանց որի հնարավոր չէ պարզել մյուս համալիրների երևան գալու ժամանակը տվյալ տեղում: Մշակույթի լրիվ ու համալարգային ուսումնասիրությունն

անզամ չի կարող այն թվագրել, եթե ապահովված չէ նրա կապը ԽՍՀՄ-
դող և հաջորդող մշակույթների հետ: Մշակույթի ավանդույթային զար-
գացումը հանգեցնում է նրա պարբերացմանը, որը և հանդիսանում է
նրա տեղական ժամանակագրության հիմքը:

ն.վ. ԵՐԻՆՁԱԿՑԱՆ

ՀԱԻ

ԵՐԿԻՐ-ԵՐԿԻՆՔ ԶՈՒՅԳԸ ՀԱՅԵՐԻ
ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

Երկիր-երկինք դիցաբանական գույզն առկա է գրեթե բոլոր ժողո-
վուրդների տիեզերածնական առասպելներում: Չանդրադառնալով տեքս-
տային, վերլուծական, ստուգաբանական և այլ հարցերի, որ բազմա-
կողմանիորեն ուսումնասիրվել են առասպելաբանության մասնագետնե-
րի կողմից /Գոնդա, Էլիագե, Տոպորով, Այոյպեր, Շերեր և այլն/,
ասենք, որ երկիր-երկինք գույզին վերաբերող տեքստերը տարբեր ժո-
ղովուրդների առասպելական մտածողության մեջ երկու հիմնական բո-
վանդակություն ունեն`

1. Արարչագործությունը նկարագրող, երբ նախնական ստատիկ
վիճակից տարազատվում է կանոնավորված տիեզերքը և Երկինք-երկիր
գույզի առջացմամբ սկսվում է մարդկության գոյության դինամիկ
պարբերաշրջանը:

2. Ետարարչագործական շրջանը նկարագրող, երբ ոչ միայն տիե-
զերքի, այլ նաև մշակույթի գոյության պայմաններում երբեմնի ի-
րար մոտ գտնվող երկինքը և երկիրը տարածականորեն հեռանում են
միմյանցից, տիեզերքն ընդլայնվում է:

Հայերի տիեզերական պատկերացումները Երկինք-երկիր գույզի
մասին ունեն հեռույալ կառուցվածք-բովանդակությունը. մի ժամանակ
երկինքը մոտ է եղել երկրին, բարոյաէթիկական սխալ վարքագծի հե-
ռանցումով դրանք հեռացել են միմյանցից:

Ի մի բերելով այսօրինակ սակավաթիվ ավանդությունները, տես-
նում ենք, որ երկնքի /տարբերակներում` արև, աստված / հեռացումը
տեղի է ունենում արգելված որևէ գործողության /հասկի սրբապղ-
ծում, վեր շարժված աղբ / հեռանցում, որոշ դեպքերում աստված է
պատժում մարդկանց` հեռացնելով երկինքը երկրից: Հետաքրքիր է
նշել նաև, որ ընդունված կարգը խախտում են կանայք, քստ որում
կազմակերպված հասարակությունից` գյուղից դուրս, համախ մահա-